Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 28-06-2024 թ. որոշմամբ
««ԴԻՍ ՓՐՈՓԵՐԹԻՍ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԴԻՍ ՓՐՈՓԵՐԹԻՍ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
1.2 Գտնվելու վայրը		ՏԱՎՈՒՇ ԴԻԼԻՋԱՆ Գետափնյա 7 չկա
1.3 Պետական գրանցման համարը		222.160.783862
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2013-09-26
1.5 ՀՎՀՀ-ն		07616584
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)55238917
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		a.karapetyan@philin.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Գլեբ Գրոշենկո		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	12	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Դիլիջանի Միջազգային դպրոցի ծրագիր Վարձակալությունից մուտք	257,082,000
	Դիլիջանի Միջազգային դպրոցի շահագործման ծրագիր	7,500,000
	Վարձակալություն ձեռնարկատիկրական գործունեությունից	10,823,289
	Նյութերի իրացումից մուտք	10,000,000

	Հողի վաճառքից մուտք	122,695,966
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Դիլիջանի Միջազգային դպրոցի կառուցման ծրագիր	361,958,378	
Դիլիջանում և հարակից համայնքներում մասնավոր ոլորտի կողմից ուղղորդվող տնտեսական աճի խթանում Կարիֆաբրիկա	100,262,800	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	473,044,467	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	462,221,178	

Նշումներ՝

12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափի գումարի մեջ ներառված է 10,823,289 դրամ ձեռնարկատիրական ծախսեր

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 33 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«ԴԻՍ Փրոփերթիս» Բարեգործական Հիմնադրամ

31 դեկտեմբերի 2023թ.

Digitally signed by MARGARYAN ANAHIT
7914810347
Date: 2024.07.01 11:07:39 AMT

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

«ԴԻՍ Փրոփերթիս» Բարեգործական Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԴԻՍ Փրոփերթիս» Բարեգործական Հիմնադրամի («Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանքներ

Հիմնադրամի 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններն աուդիտի են ենթարկվել մեկ այլ աուդիտորի կողմից, որն իր 2023թ.

հունիսի 21-ով թվագրված եզրակացությունում այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ արտահայտել է չձևափոխված կարծիք:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Էմիլ Վասիլյան, FCCA
Առաջադրանքի պատասխանատու

28 հունիսի 2024թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	498,836	599,248
Ներդրումային գույք	5	33,544,136	34,524,025
Ոչ նյութական ակտիվներ	6	29,260	33,553
Տրված ոչ ընթացիկ փոխառություններ		20,345	20,345
		34,092,577	35,177,171
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	7	365,657	410,579
Տրված փոխառություններ		25,000	-
Դեբիտորական պարտքեր		14,671	32,309
Կանխավճարներ		7,018	53,198
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	8	126,079	191,044
		538,425	687,130
Ընդամենը ակտիվներ		34,631,002	35,864,301
Զուտ ակտիվներ և պարտավորություններ			
Զուտ ակտիվներ			
Կուտակված շահույթ		307,143	302,151
		307,143	302,151
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	9	33,738,836	34,864,963
		33,738,836	34,864,963
Ընթացիկ պարտավորություններ			
Եկամտին վերաբերող շնորհներ	10	535,189	660,232
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	49,834	36,955
		585,023	697,187
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		34,631,002	35,864,301

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2024թ. հունիսի 27-ին:

Գլխավոր հաշվեկալ — Ժաննա Հովհաննիսյան

Տնօրեն — Հաշվապահական ընկերության ներկայացուցիչ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Նվիրատվությունից եկամուտ	12	1,258,670	1,237,726
Ներդրումային գույքի վարձակալությունից եկամուտ		241,249	197,137
Այլ եկամուտ		10,304	18,084
Մաշվածության և ամորտիզացիայի ծախսեր		(1,007,970)	(1,022,409)
Պահպանման ծախսեր		(234,742)	(207,518)
Անձնակազմի ծախսեր		(86,919)	(74,057)
Պաշարների արժեզրկման գծով ծախսեր		(39,019)	-
Համայնքի զարգացման ծախսեր		(57,082)	(58,580)
Հիմնական միջոցների օտարումից զուտ վնաս		(43,171)	-
Մասնագիտական ծառայություններ		(11,796)	(18,530)
Տրված նվիրատվություններ		(9,195)	(7,583)
Այլ ծախսեր	13	(10,456)	(17,933)
Գործառնական գործունեությունից արդյունք		9,873	46,337
Փոխարժեքային տարբերությունից օգուտ		35	3,404
Շահույթ մինչև հարկումը		9,908	49,741
Շահութահարկի գծով ծախս		(4,916)	-
Տարվա շահույթ		4,992	49,741

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	252,410	252,410
Տարվա շահույթ	49,741	49,741
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	302,151	302,151
Տարվա շահույթ	4,992	4,992
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	307,143	307,143

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված նվիրատվություններից մուտքեր	7,500	575,507
Վարձակալական վճարներից մուտքեր	400,601	196,923
Հարկերի միասնական հաշվից մուտք	-	39,900
Այլ դրամական մուտքեր	-	5,562
Վճարումներ մատակարարներին	(213,737)	(338,209)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(84,942)	(77,588)
Վճարումներ պետական բյուջե	(31,484)	(9,764)
Այլ դրամական վճարումներ	(971)	(1,707)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	76,967	390,624
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տրամադրված փոխառությունների գծով վճարումներ	(25,000)	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման համար կատարված վճարումներ	(116,857)	(206,208)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(141,857)	(206,208)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Փոխառություններից մուտքեր	73,000	-
Փոխառությունների մարում	(73,052)	-
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(52)	-
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում)	(64,942)	184,416
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(23)	3,374
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	191,044	3,254
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	126,079	191,044

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«ԴԻՍ Փրոփերթիս» Բարեգործական Հիմնադրամը (Հիմնադրամ) հիմնադրվել է 2013թ. օգոստոսի 26-ին՝ Ռուբեն Վարդանյանի և տիկին Վերոնիկա Զոնաբենդի կողմից՝ որպես ոչ առևտրային կազմակերպություն:

Հիմնադրամի հիմնական նպատակներն են՝

- Դիլիջանում և հարակից համայնքներում կրթական և գիտական ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում,
- Անշարժ գույքի, այլ գույքի և նյութական արժեքների պահպանություն, տիրապետում, կառավարում, սեփականության իրավունքի օգտագործում, բարեգործական և ոչ բարեգործական կազմակերպությունների նկատմամբ գերակայություն և ղեկավարում պայմանով, որ սեփականությունը ներգրավված լինի բարեգործական գործունեության մեջ:
- Դիլիջանում և հարակից համայնքներում զբոսաշրջության զարգազմանն ուղղված ծրագրերի իրականացում:

Հիմնադրամի գործունեությունը հիմնականում ֆինանսավորվում է կապակցված կողմերից և երրորդ կողմերից ստացված դրամաշնորհների և ոչ նպատակային նվիրատվությունների միջոցով:

Հիմնադրամն ունի սեփականության իրավունք դպրոցական շենքերի համալիրի նկատմամբ, որը վարձակալության է հանձնում Հիմնադրամի կապակցված կողմ հանդիսացող Դիլիջանի միջազգային դպրոց, Հայաստան Հիմնադրամին: Հիմնադրամն իրականացնում է նաև դպրոցի և հարակից տարածքների պահպանում: Պահպանման ծախսերը ֆինանսավորվում են ներդրումային գույքի վարձակալության եկամտից և ստացված նվիրատվություններից: Հիմնադրամին պատկանող սարքավորումների, տնտեսական գույքի մի մասը գտնվում են դպրոցի շենքի տարածքում և օգտագործվում են վարձակալի կողմից:

Հիմնադրամը Դիլիջանում ունի նաև կապակցված կողմին վարձակալությամբ տրված կառուցապատման իրավունք և զբաղվում է Դիլիջանի և հարակից տարածքների զարգացմանն ուղղված տարբեր փոքր ծրագրերով:

Հիմնադրամի կողմից ստացված դրամաշնորհները և նվիրատվություններն ազատված են շահութահարկից: Ներդրումային գույքի վարձակալական եկամուտը ենթակա է շահութահարկով հարկման, իսկ պահպանման և մաշվածության ծախսերը հիմնականում շահութահարկի հաշվարկման նպատակով նվազեցվող ծախսեր են: Հետևաբար, շահութահարկով հարկման նկատառումներով, Հիմնադրամը վնասով աշխատող ընկերություն է և ակնկալվում է, որ իր գործունեության ողջ ընթացքում կշարունակի մնալ այդպիսին: Ղեկավարությունը չի ակնկալում, որ կուտակված հարկային վնասները հետագայում կարող են օգտագործվել հարկվող շահույթի նկատմամբ:

Հիմնադրամը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված բարեգործական հիմնադրամ է: Բարեգործական հիմնադրամներն իրավունք չունեն հայտարարելու և վճարելու շահաբաժիններ:

Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը 2023թ. կազմել է 10 մարդ (2022թ.՝ 11 մարդ):

Հիմնադրամի գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Դիլիջան 3903, Գետափնյա փող. 7:

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Իրավիճակն Հայաստանի Հանրապետությունում էլ ավելի է սրվել Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյուքում: Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա թե կարճաժամկետ, և թե երկարաժամկետ առումներով:

2023թ. Հայաստանի Հանրապետությունում քաղաքական իրավիճակը շարունակում է մնալ համեմատաբար անկայուն, 44-օրյա Արցախյան պատերազմի հետևանքները դեռևս էական ազդեցություն են ունենում երկրի ընդհանուր տնտեսության վրա: 2023թ. սեպտեմբերին շուրջ 120,000 Արցախաբնակ հայերի բռնի տեղահանումը դեպի Հայաստան լրացուցիչ տնտեսական և քաղաքական ցնցումների առիթ հանդիսացավ: Քաղաքական անկայուն իրավիճակի, միջազգային ճանապարհների պարբերաբար փակման, հրադադարի ռեժիմի կարճաժամկետ խախտումների հետևանքով, դժվար է հստակ կանխատեսել նշված պայմանների տնտեսական ազդեցությունը Հիմնադրամ գործունեության վրա:

2022թ. փետրվարի 24-ին Ուկրաինայում բռնկված հակամարտությունն արագությամբ ծավալվում է՝ զգալի ազդեցություն թողնելով աշխարհի վրա: ԱՄՆ-ն և եվրոպական երկրները կոշտ պատժամիջոցներ են կիրառել Ռուսաստանի Դաշնության դեմ: Արևմտյան երկրները քննարկում են գոյություն ունեցող պատժամիջոցների ընդլայնումը: Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի Հանրապետության էական առևտրատնտեսական գործընկերն է, ուստի սույն ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ կիրառվող պատժամիջոցները, ինչպես նաև դրանց ընդարձակումը կարող են լուրջ ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկաների և ամբողջ տնտեսության վրա: Համաշխարհային մակարդակով ավելի խոր պատժամիջոցներ կիրառելը կարող է հանգեցնել բարձր գնաճի, ֆինանսական շուկաների աճի տեմպի նվազման և որոշակի խաթարման:

Ուկրաինայում բռնկված հակամարտությունը պատճառ դարձավ, որ հազարավոր ռուսներ և ուկրաինացիներ տեղափոխվեն Հայաստանի Հանրապետություն: Սա վերաբերում է ոչ միայն անհատներին, այլ նաև ձեռնարկություններին, որոնք հիմնադրվել և իրենց գործունեությունը ծավալել են այդ երկրներում: Դա հանգեցրեց հայկական շուկա արտարժույթի ներհոսքի ավելացմանը, ինչի հետևանքով հայկական դրամը զգալի արժևորվեց ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ: Մյուս կողմից, ՀՀ կենտրոնական բանկը ոչ մի միջոց չձեռնարկեց, որպեսզի թուլացնի հայկական ազգային արժույթի դիրքերը:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում նկատվել է փոխարժեքի կայունություն, հետևաբար ղեկավարությունը չի ակնկալում, որ հայկական դրամի հետագա արժեւորում կլինի ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ: Սակայն Հայաստանի Հանրապետությունում տնտեսական և քաղաքական գործոնները, ինչպես նաև Ուկրաինայում շարունակվող

հակամարտությունը կարող են բացասաբար ազդել Հիմնադրամի ֆինանսական կայունության վրա, որի ամբողջական հետևանքները այս պահին դժվար է կանխատեսել:

Հիմնադրամի ղեկավարությունը գտնում է, որ իր ընթացիկ իրացվելիության վիճակը բավարար է կայուն գործունեության համար: Հիմնադրամը պարբերաբար վերանայում է իր իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան գործիքակազմ:

Ղեկավարության գնահատմամբ վերոնշյալ իրադարձությունները նշանակալի ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի գործունեության և ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Հիմնադրամը շահույթ չհետապնդող ընկերություն է, որն ունի շարունակական ֆինանսավորում իր կապակցված կողմերից և վարձակալության երկարաժամկետ պայմանագիր, և չկան այնպիսի գործոններ, որոնք կասկածի տակ կդնեն այդ գործողությունների և Հիմնադրամի գործունեության շարունակական լինելը:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա: Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Հիմնադրամնիր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

Ներկայումս ՖՀՄՍ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ-ները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»*:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է

Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 14-ում: Չնայած ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության կողմից ներկա ցուցանիշների վերաբերյալ տեղեկացված լինելու վրա, այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին: Հետևաբար, կատարված ենթադրությունները և դատողությունները համապատասխանաբար կճշգրտվեն այն տարում, որում պայմանները կփոխվեն:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Հիմնադրամն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2023թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) և ՀՀՄՄԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը	Տվյալ ամսաթվին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար կիրառելի
ՀՀՄՍ 1	*Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*
ՖՀՄՍ 16	*Վարձակալության պարտավորություն Վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքի ժամանակ (ՀՀՄՍ 16 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 1	*Ոչ-ընթացիկ պարտավորություններ պայմանագրերի հետ* *(ՀՀՄՍ 1 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7	*Մատակարարների ֆինանսական պայմանավորվածություններ (ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)*	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 21	*Փոխանակելիության բացակայություն (ՀՀՄՍ 21 փոփոխություն)*	*1 հունվարի 2025թ.*

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը. 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 404.79 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 447.9 ՀՀ դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 393.57 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 420.06 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների հոդվածները, բացառությամբ հողի, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր

բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականության: Վարձակալական գույք հանդիսացող շենքերը նույնպես ընդգրկվում են հիմնական միջոցներում, եթե դրանք ստացվել են ֆինանսական վարձակալությամբ: Նման ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում (որը որոշվում է՝ համեմատելով սեփական համանման ակտիվների հետ) կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	-	10-50 տարի
Տրանսպորտային միջոցներ	-	10 տարի
Սարքավորումներ, տնտեսական գույք	-	1-8 տարի:

Քանի որ հողի համար հնարավոր չէ որոշել վերջավոր օգտակար ծառայության ժամկետ, համապատասխան հաշվեկշռային արժեքը չի ամորտիզացվում:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Հիմնադրամի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է տարվա արդյունքում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Շինարարական իրավունք	-	5-10 տարի
Համակարգչային ծրագիր	-	5 տարի
Այլ	-	1-50 տարի:

3.4 Ներդրումային գույք

Ներդրումային գույքը, որը պահվում է վարձակալական եկամուտ ստանալու և/կամ դրա արժեքի աճի նպատակով, սկզբնապես հաշվառվում է սկզբնական արժեքով՝ ներառելով գործարքի ծախսերը: Հետագայում չափվում են սկզբնական արժեքով:

Ներդրումային գույքից ստացված վարձակալական եկամուտը և գործառնական ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Մաշվածության հաշվարկը սկսվում է այն ժամանակ, երբ ակտիվները դասակարգվում են որպես ներդրումային գույք:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ներդրումային գույքի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Շենքեր և շինություններ	-	50 տարի
Կառուցվածքներ	-	10 տարի
Կահավորանք	-	5-8 տարի:

3.5 Վարձակալված ակտիվներ

2019թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո կնքված ցանկացած նոր պայմանագրի դեպքում Հիմնադրամը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»: Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Հիմնադրամը պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Հիմնադրամի կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները): Հիմնադրամը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Հիմնադրամը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան:

Հիմնադրամը որպես վարձատու

Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը՝ ՖՀՄՍ 16-ի համաձայն, համադրելի ժամանակաշրջանի համեմատ չի փոփոխվել:

Որպես վարձատու Հիմնադրամը դասակարգում է իր վարձակալությունները որպես գործառնական կամ ֆինանսական:

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական, եթե այն փոխանցում է հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքի հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերը և օգուտները և գործառնական, եթե նշվածը տեղի չի ունենում:

3.6 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

Յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջին պաշարները վերանայվում են արժեզրկման հայտանիշների առկայության տեսանկյունից և ելնելով առկա իրողությունից, ղեկավարության դատողությունից և գնահատումներից ձևակերպվում է պաշարների արժեզրկման գծով պահուստի շարժը:

3.7 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- Ամորտիզացված արժեքով հաշվառվող
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմանները առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Հիմնադրամի դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը, ինչպես նաև ցուցակված պարտատոմսերը, որոնք նախկինում՝ ՀՀՄՍ 39-ի համաձայն դասակարգված էին որպես մինչև մարման ժամպետը պահվող:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: Այս մոդելը փոխարինում է ՀՀՄՍ 39-ում կիրառվող «կրած վնասների մոդելին»: Նոր պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված վարկերը և այլ փոխառային տիպի այլ ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում, առևտրային դեբիտորական պարտքերը, պայմանագրային ակտիվները որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն և վարկային պարտավորությունները և որոշ ֆինանսական երաշխավորության պայմանագրերը (թողարկողի համար), որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթում կամ վնասում:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Հիմնադրամի՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Հիմնադրամը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- Ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն խեղաթյուրվել կամ ունեն ցածր պարքային ռիսկ («Փուլ 1») և
- Ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն խեղաթյուրվել են և որոնց պարքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):

«Փուլ 3»-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

«12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են առաջին դասի ակտիվների համար, մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանավչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկերի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 15.2-ում:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.8 Արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.9 Զուտ ակտիվներ

Հիմնադրամի զուտ ակտիվները չեն բաշխվում հիմնադիրներին ո՛չ սովորական գործունեության ընթացքում, ո՛չ էլ լուծարման ժամանակ:

Զուտ ակտիվները բաղկացած են չբաշխված շահույթից, ինչն էլ ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանի ամբողջ եկամուտը:

3.10 Շնորհներ և նվիրատվություններ

Դրամաշնորհները ստացվում են որոշակի նպատակներով և նախատեսված չեն Հիմնադրամի ընդհանուր օգտագործման համար: Այս դրամաշնորհները չեն ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավոր հավաստիացում, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Հիմնադրամի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են:

Շնորհը, որը հատկացվում է Հիմնադրամին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

Անսահմանափակ նվիրատվությունները հասանելի են ընդհանուր նպատակների համար, ինչպես սահմանված է Հիմնադրամի կառավարման փաստաթղթերում: Հետևաբար, անսահմանափակ միջոց ճանաչված նվիրատվությունները ճանաչվում են որպես հասույթ, երբ դառնում են ստացման ենթակա:

3.11 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

(գ) ոչ դրամային հատուցումները (օրինակ՝ առողջական ծառայությունները):

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամին մատուցում են ծառայություններ, Հիմնադրամն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Հիմնադրամը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Հիմնադրամն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

Աշխատակիցները Հայաստանի Հանրապետության պետական կենսաթոշակային ֆոնդից ստանում են կենսաթոշակային նպաստներ՝ օրենքներին և կանոնակարգերին համապատասխան: Հիմնադրամը ներդրումներ կատարում է Կառավարության Կենսաթոշակային ֆոնդին՝ տարվա ընթացքում գործող օրենքով սահմանված չափով: Այս ներդրումները ծախսագրվում են առաջացման պահին:

3.12 Վարձակալական եկամուտ

Վարձակալական եկամուտն առաջանում է վարձակալության պայմանագրերից, որոնցում Հիմնադրամը, որպես վարձատու, վարձակալներին է տալիս տարբեր գույք, կառուցվածքներ և հարմարանքներ, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ հաշվառվում են որպես ներդրումային գույք:

Ներդրումային գույքից վարձակալական եկամուտը ճանաչվում է գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Սարքավորումներ, տնտեսական գույք	Տրանսպորտային միջոցներ	Շենքեր	Հող
Սկզբնական արժեք				
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	412,274	76,053	309,143	215,108
Ավելացում	6,153	-	176,000	24,000
Օտարում	-	(37,347)	-	-
Վերադասակարգում ներդրումային գույքի	-	-	(67,357)	-
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	418,427	38,706	417,786	239,108
Ավելացում	4,079	-	-	-
Օտարում	(26,189)	-	(241,224)	(148,785)
Վերադասակարգում ներդրումային գույքից	-	-	58,113	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	396,317	38,706	234,675	90,323
Կուտակված մաշվածություն և արժեզրկում				
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	250,458	51,495	180,945	-
Տարվա հաշվարկ	47,620	4,918	32,644	-
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(29,763)	-	-
Վերադասակարգում ներդրումային գույքի	-	-	(14,838)	-
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	298,078	26,650	198,751	-
Տարվա հաշվարկ	47,728	3,871	21,212	-
Օտարման հետևանքով դուրսգրում	(17,645)	-	(205,040)	-
Վերադասակարգում ներդրումային գույքից	-	-	9,058	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	328,161	30,521	23,981	-
Հաշվեկշռային արժեք				
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	120,349	12,056	219,035	239,108
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	68,156	8,185	210,694	90,323

Հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամի հիմնական միջոցների նկատմամբ սահմանափակումներ առկա չեն:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 18,799 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 19,643 հազար դրամ) սկզբնական արժեք ունեցող հիմնական միջոցները հաշվարկվել են զրո հաշվեկշռային արժեքով:

5 Ներդրումային գույք

Հազար դրամ

	2023թ.	2022թ.
Սկզբնական արժեք		
Տարեսկզբի մնացորդ	41,334,409	41,267,052
Ավելացում	-	67,357
Վերադասակարգում հիմնական միջոցներին	(58,113)	-
Տարեվերջի մնացորդ	41,276,296	41,334,409
Կուտակված մաշվածություն		
Տարեսկզբի մնացորդ	6,810,384	5,862,661
Վերադասակարգված ակտիվի մաշվածություն	(9,058)	14,838
Տարվա մաշվածություն	930,834	932,885
Տարեվերջի մնացորդ	7,732,160	6,810,384
Տարեվերջի հաշվեկշռային արժեք	33,544,136	34,524,025

Ներդրումային գույքը ներառում է կապակցված կողմին վարձակալության տրված շենքերը, կառուցվածքները և այլ գույքը:

Վարձակալական պայմանագրի տևողությունը 10 տարի է՝ վարձակալության մեկնարկի պահից սկսած 3 տարի չեղյալ չհայտարարվող ժամկետով և հետագա երկարացման 5 տարի ժամկետով, եթե վարձակալը չդադարեցնի վարձակալությունը:

Ապագա գործառնական վարձակալության գծով ստացվելիք գումարները բացահայտված են ծանոթագրություն 18-ում:

Իրական արժեքի չափում

Ղեկավարության համոզմամբ ներդրումային գույքի գնահատված իրական արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ համապատասխանել է հաշվեկշռային արժեքին: Հաշվետու տարվա կեսից վարձակավճարի չափն ավելացել է 5%-ով: Ներդրումային գույքի իրական արժեքը դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

6 Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Կառուցապատման իրավունք	Վարձակալության իրավունք	Համակարգչային ծրագրեր	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	78,673	30,566	4	109,243
Ավելացում	-	8	48	56
Օտարում	-	-	(45)	(45)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	78,673	30,574	7	109,254
Ավելացում	-	8	27	35
Օտարում	-	-	(27)	(27)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	78,673	30,582	7	109,262
Կուտակված ամորտիզացիա				
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	68,498	2,906	-	71,404
Տարվա հաշվարկ	3,588	709	45	4,342
Օտարման հետևանքով դուրսգրում	-	-	(45)	(45)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	72,086	3,615	-	75,701
Տարվա հաշվարկ	3,588	713	24	4,325
Օտարման հետևանքով դուրսգրում	-	-	(24)	(24)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	75,674	4,328	-	80,002
Հաշվեկշռային արժեք				
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,587	26,959	7	33,553
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,999	26,254	7	29,260

7 Պաշարներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պահեստամասեր և նյութեր	444,654	450,718
Վառելիք	250	48
Արժեզրկման պահուստ	(79,247)	(40,187)
	365,657	410,579

Տարվա ընթացքում ծախս ճանաչված պաշարների գումարը կազմում է 15,347 հազար դրամ (2022թ.՝ 35,179 հազար դրամ): Տարվա ընթացքում համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության միջոցով պաշարների արժեզրկման գծով ճանաչված ծախսը կազմել է 39,019 հազար դրամ (2022թ.՝ ծախսի հակադարձումը կազմել է 1,748 հազար դրամ)։

Պաշարները գրավադրված չեն:

8 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	-	49
Բանկային հաշիվներ, այդ թվում՝	126,079	190,995
Հայկական դրամով	126,003	190,622
Ռուսական ռուբլով	74	-
ԱՄՆ դոլարով	-	372
Այլ	2	1
	126,079	191,044

Բանկային մնացորդները պահվում են «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում: Դրամական միջոցների և դրանց համարժեքների մնացորդների պարտքային որակը, որը հիմնված է պարտքային ռիսկի դասակարգերի վրա, 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գնահատվում է որպես BB- (2022թ.՝ B+)՝ համաձայն Standard & Poor's միջազգային վարկանշային գործակալության: Կանխիկ միջոցների և բանկային հաշիվների գծով ակնկալվող պարտքային կորուստներն էական չեն:

Հիմնադրամը դոնորների կողմից նվիրատվություններ է ստանում արտարժույթով, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը: Միաժամանակ Հիմնադրամի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Հաշվետվու տարվա վերջի դրությամբ Հիմնադրամն արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքներ չունի, ուստի դրամի արժևորումը արտարժույթի նկատմամբ էական ազդեցություն չունի Հիմնադրամի ֆինանսական արդյունքի վրա։

9 Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Մնացորդ տարվա սկզբում	34,864,863	35,727,475
Եկամտին վերաբերող շնորհներից փոխանցում	116,892	206,208
Ճանաչված եկամուտ (տե՛ս ծանոթ. 12)	(1,243,019)	(1,068,720)
Տարեվերջի մնացորդ	33,738,836	34,864,963

10 Եկամտին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Մնացորդ տարվա սկզբում	660,232	458,150
Ստացված նվիրատվություններ	7,500	575,507
Արժեզրկված պաշարների հակադարձումից ավելացում	-	1,789
Փոխանցում ակտիվներին վերաբերող շնորհներին	(116,892)	(206,208)
Ճանաչված եկամուտ (տե՛ս ծանոթ. 12)	(15,651)	(169,006)
Տարեվերջի մնացորդ	535,189	660,232

Դրամաշնորհները ստացվում են որոշակի նպատակով և նախատեսված չեն Հիմնադրամի ընդհանուր օգտագործման համար:

Նվիրատվությունները հասանելի են ընդհանուր օգտագործման համար, ինչպես սահմանված է Հիմնադրամի կառավարման փաստաթղթերում:

11 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	38,950	34,973
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	4,149	1,537
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	5,963	17
Այլ կրեդիտորական պարտքեր	772	428
	49,834	36,955

Հիմնադրամն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

Բոլոր մնացորդները հայկական դրամով են:

12 Նվիրատվությունից եկամուտ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ (տե՛ս ծանոթագրություն 9)	1,243,019	1,068,720
Եկամտին վերաբերող շնորհներից եկամուտ (տե՛ս ծանոթագրություն 10)	15,651	169,006
	1,258,670	1,237,726

13 Այլ ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վարձակալության ծախսեր	4,565	7,142
Վառելիքի և տրանսպորտային ծախսեր	3,326	4,335
Ապահովագրական ծախսեր	1,419	1,439
Հողի և գույքի հարկ	149	163
Բանկային ծախսեր	236	2,059
Այլ	761	2,795
	10,456	17,933

14 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

Պաշարներ

Ղեկավարությունը գնահատում է պաշարների զուտ իրացման արժեքը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ հասանելի ամենավստահելի ապացույցները: Այս պաշարների ապագա իրացման վրա կարող են ազդեցություն ունենալ ապագա

տեխնոլոգիաները կամ շուկայով առաջնորդվող այլ փոփոխությունները, որը կարող է նվազեցնել ապագա վաճառքի գները:

15 Ֆինանսական գործիքներ

15.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3-ում:

15.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական ակտիվներ		
Տրված փոխառություններ	45,345	20,345
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	14,433	19,964
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	126,079	191,044
	185,857	231,353

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	38,950	34,973
	38,950	34,973

16 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժութային ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Արտարժույթով արտահայտված դրամական միջոցները ներկայացված են ծանոթագրություն 9-ում: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Այս ռիսկի ազդեցությունը Հիմնադրամի համար առաջանում է տարբեր ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են դեբիտորական պարտքերը և տրված փոխառությունները: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ՝ հաշվեկշռային արժեքներ		
Տրված փոխառություններ	45,345	20,345
Դեբիտորական պարտքեր	14,433	19,964
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	126,079	191,044
	185,857	231,353

Հաշվետու ամսաթվի դրությամբ դեբիտորական պարտքերը կապակցված ընկերությունների գծով են և ամբողջովին հավաքագրելի, ուստ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ:

Դրամարկղում և բանկերում մնացորդների մասով պարտքային ռիսկն էական չէ, քանի որ պայմանագրային գործընկերները հեղինակավոր բանկեր են:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Հիմնադրամն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետը գնահատվում է մինչև 6 ամիս:

Հիմնադրամն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Հիմնադրամի դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերն գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը:

17 Իրական արժեքի չափում

Հիմնադրամը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

17.1 Ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափում

Հիմնադրամի հողը և շենքերը հաշվառվում են սկզբնական արժեքով, որը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում: Հողի և շենքերի գնահատված իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

Վարչական նպատակով պահվող հող (3-րդ մակարդակ)

Գնահատումն իրականացվել է՝ օգտագործելով շուկայական մոտեցումը, որն արտացոլում է նմանատիպ գույքի համար վերջերս իրականացված շուկայական գործարքներում դիտարկված գները և միավորում է վերոհիշյալ հողին յուրահատուկ ցուցանիշների ճշգրտումները՝ ներառյալ հողամասի չափը, գտնվելու վայրը, սահմանափակումները և օգտագործման նպատակը:

Նշանակալի ոչ տեսանելի ելակետային տվյալը վերոհիշյալ հողին յուրահատուկ ցուցանիշների ճշգրտումն է: Այս ճշգրտման չափը և ուղղությունը կախված է նմանատիպ

գույքի հետ կապված տեսանելի շուկայական գործարքների քանակից և բնույթից, որոնք օգտագործվում են որպես գնահատման սկիզբ: Չնայած այս ելակետային տվյալը հիմնված է սուբյեկտիվ դատողության վրա՝ ղեկավարությունը ենթադրում է, որ ողջամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրություններն էական ազդեցություն չեն ունենա ընդհանուր գնահատման վրա:

Շենքեր

Գրասենյակային շենքերի իրական արժեքները գնահատվում են՝ օգտագործելով եկամտային մոտեցումը, որը կապիտալացնում է վարձակալական եկամտի գնահատված հոսքը՝ հանած պլանավորված գործառնական ծախսերը՝ օգտագործելով շուկայական եկամտաբերությունից ստացված զեղչման տոկոսադրույքը, որը որոշվում է՝ ելնելով նմանատիպ գույքի հետ կապված վերջին գործարքներից: Երբ փաստացի վարձավճարն էականորեն տարբերվում է գնահատված վարձավճարից, նշանակում է՝ գնահատված վարձակալական արժեքում ճշգրտումներ են կատարվել: Գնահատված վարձակալական եկամտի հոսքը դիտարկելիս հաշվի են առնվում շենքի զբաղեցված լինելու ներկայիս մակարդակը, չզբաղեցված տարածքների ապագա մակարդակի գնահատումները, վարձակալության ժամկետները և շենքի մնացորդային տնտեսական ծառայության ընթացքում ապագա վարձակալություններից ակնկալվող վարձակալական եկամուտները:

Ամենանշանակալի ելակետային տվյալները, որոնցից բոլորն էլ ոչ տեսանելի են, իրենցից ներկայացնում են գնահատված վարձակալական արժեքը, չզբաղեցված տարածքների մակարդակի վերաբերյալ ենթադրությունները և զեղչման տոկոսադրույքը: Գնահատված իրական արժեքը աճում է, եթե գնահատված վարձակալական եկամուտն աճում է, չզբաղեցված տարածքների մակարդակը նվազում է կամ, երբ զեղչման տոկոսադրույքը (շուկայական եկամտաբերությունը) նվազում է: Ընդհանուր գնահատումները զգայուն են բոլոր երեք ենթադրությունների հանդեպ: Ղեկավարության ենթադրությամբ ողջամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրությունների բազմությունն առավելագույնն է վարձակալական արժեքների և չզբաղեցված տարածքների մակարդակների համար, բացի այդ, տվյալ ելակետային տվյալների միջև գոյություն ունի փոխկապակցվածություն:

18 Ապագա սպասվող վարձավճարներ

Գործառնական վարձակալությունը վերաբերում է ներդրումային գույքին վարձակալության 10 տարի ժամկետով՝ վարձակալության մեկնարկի պահից սկսած 3 տարի չեղյալ չհայտարարվող ժամկետով և հետագա երկարացման 5 տարի ժամկետով, եթե վարձակալը չդադարեցնի վարձակալությունը: Հիմնադրամը վարձակալության ժամանակաշրջանի վերջում հնարավորություն չունի ձեռք բերել վարձակալված ակտիվները:

Ապագա գործառնական վարձակալության գծով սպասվող գումարները ներկայացված են ստորև.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մինչև 1 տարի	243,852	237,774
1-ից 5 տարի	1,219,260	1,219,260
5 տարուց ավելի	162,568	406,420
	1,625,680	1,863,454

19 Պայմանականություններ

19.1 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

19.2 Շրջակա միջավայրի հետ կապված հարցեր

Ղեկավարության համոզմամբ՝ Հիմնադրամը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջներին և վստահ է, որ շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

20 Կապակցված կողմեր

Հիմնադրամի կապակցված կողմերը ներառում են Հիմնադրին, ընդհանուր վերահսկողության տակ գտնվող կազմակերպությունները, հոգաբարձուների խորհրդի անդամները, հիմնական ղեկավար անձնակազմը և նրանց հետ փոխկապակցված անձինք:

20.1 Վերահսկողություն

Հիմնադրամը վերահսկվում է հոգաբարձուների խորհրդի կողմից: Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներն են Լիանա Յորդանյանը, Նուբար Աֆեյանը, Արմեն Մկրտչյանը և Արմինե Սահակյանը:

20.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Հիմնադրամի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Հազար դրամ Գործարքներ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ստացված դրամաշնորհներ և նվիրատվություններ	7,500	370,698
Վարձակալական եկամուտ	237,774	197,753
Այլ եկամուտ	8,766	12,650
Տրամադրված նվիրատություններ	8,221	-
Ձեռք բերված ծառայություններ	13,379	24,950

Հազար դրամ Մնացորդներ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ծառայությունների գծով կրեդիտորական պարտքեր	12,573	11,261
Եկամտին վերաբերող շնորհներ	503,109	495,609
Վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	13,883	19,440

20.3 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Փոխհատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ	20,570	20,047

Հազար դրամ Մնացորդներ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Չօգտագործված արձակուրդային օրերի գծով պահուստ	1,175	469

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 01.07.2024 10:55